ԱՊՊԻՈՍ ԿԼՈԴԻՈՍԻ ԴԵՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

ՍԵԴՐԱԿ ԿՐԿՅՈՒՇԱՐՅԱՆ

Տիգրան Բ Մեծի ժամանակաշրջանի հայ-հռոմեական պատերազմին նախորդող իրադարձությունները պատմագրության մեջ շարադրվում և ընդունվում են հետևյալ կերպ. Միհրդատ VI Եվպատորը Միհրդատյան III պատերազմում պարտվելով՝ փախել է Հայաստան (մ. թ. ա. 70 թ.)[1]։ Լուկուլլոսը շարունակել է Պոնտոսի նվաճումը (մ. թ. ա. 70 թ. ընթացքում)[2] և Ապպիոս Կլոդիոսին ուղարկել Տիգրանի մոտ՝ պահանջելու Միհրդատին (մ. թ. ա. 71 թ. վերջին կամ 70 թ.)[3]։ Տիգրանը Հայաստանում չէր. նա Փյունիկիայում զբաղված էր ինչ-որ քաղաքներ գրավելով[4]։ Սակայն, ի վերջո, Տիգրանն ու Ապպիոսը հանդիպել են. վերջինս պահանջել է Միհրդատին, մերժվել և վերադարձել Լուկուլլոսի մոտ[5]։ Լուկուլլոսը, ավարտելով Պոնտոսի նվաճումը, մնկնել է Ասիա պրովինցիա[6]։ Տիգրանը վերսկսել է իր արշավանքը Միջերկրական ծովի ափին[7]։ Մ. թ. ա. 69 թ. գարնանը Լուկուլլոսը ներխուժել է Հայաստան, և Տիգրանը վերադարձել է հայրենիք[8]։

Ելնելով վերոգրյալից, ուսումնասիրողները գտնում են, որ Լուկուլլոսն իր գործողություններով աշխատել է թուլացնել Տիգրանի աշակրջությունը[9], որ վերջինս ապահով է զգացել այն պահին, երբ պատերազմը բախում էր իր

---

[1] „Appiani Historia Romana", vol. 1, Lipsiae, 1962, Mithr., 82, 368 (*այսուհետև՝* App., Mithr.); „Plutarch's Lives", vol., 2. Loeb Clasical Librari [*այսուհետև՝* (LCL)], Cambridge, Massachusetts, London (*այսուհետև՝* CML), 1959, Luc., XIX, 1 (*այսուհետև՝* Plut., Luc...), Mamnonis, Historiarum Heracleae Ponti, Lipsiae, 1896, XLIV (*այսուհետև՝* Memnon); Cicero, De imperio Cn. Pompei, (LCL), CML, 1959, IX, 23 (p. 34), *Հ. Մանանդյան, երկեր, հ. 1, Երևան, 1977, էջ 185, 478, Ս. Կրկյաշարյան, Տիգրան II-ի վերաբերյալ մի կարևոր ուղղում («Պատմա-բանասիրական հանդես», 1967, № 4, էջ 277. այսուհետև՝ ՊԲՀ), «Հայ ժողովրդի պատմություն», հ. 1, Երևան, 1971, էջ 582 (այսուհետև՝ ՀԺՊ)։*

[2] App., Mithr., 82, 369; Plut., Luc., XIX, 1–2, Memnon, XLV, 1—3; *Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 187, 483, ՀԺՊ, էջ 585։*

[3] Plut., Luc., XIX, 1, Memnon, XLVI, 2, *Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 140, 428, Հ. Աստուրյան, Քաղաքական վերաբերություններ ընդմեջ Հայաստանի և Հռոմի, Վենետիկ, 1912, էջ 48—49, ՀԺՊ, էջ 583, Կ. Էքհարդ, Տիգրան Բ. և հայ-լուկուլլյան պատերազմները, Վիեննա, 1921, էջ 57։*

[4] Plut., Luc., XXI, 2.

[5] Plut., Luc., XXI, 1—7, Memnon, XLVI, 2—3.

[6] App., Mithr., 83, 375—376, *Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 187, 484, ՀԺՊ, էջ 585։*

[7] *Հ. Արմեն, Մեծն Տիգրան, Անթիլիաս, 1947, էջ 140, ՊԲՀ, էջ 277։*

[8] *«Հովսեպոս Փլավիոս։ Դիոն Կասսիոս», Երևան, 1976, Հրեական պատերազմի մասին,* I, 116 (*էջ 35. այսուհետև՝* Jos. Flav., Bel. Jud.), *Հրեական հնախոսություն,* XIII, *421 (էջ 67. այսուհետև՝* Jos. Flav., Ant. Jud.), *«Մովսիսի Խորենացվոյ Պատմութիւն Հայոց», Տփղիս, 1913, էջ 129, Հ. Արմեն, նշվ. աշխ., էջ 141, ՀԺՊ, էջ 585, ՊԲՀ, էջ 278։*

[9] *Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 189, 485։*

երկրի դռները, թերագնահատել է Հռոմի վտանգը[10], և որ Տիգրանը, Ապպիոսին մերժելով, կարծել է, թե պիտի կանխեր պատերազմը[11]։ Այսպիսով, Տիգրան Բ Մեծը ներկայացվում է իբրև խաբված, միամիտ[12] անձնավորություն։

Ապպիոսի դեսպանության իսկությունն ընդունելու հանգամանքը ընդհատում է իրադարձությունների կապակցված շղթան։ Այսպես, երբ Ապպիոսը մեկնել է Անտիոք, Տիգրանը, ինչպես վկայում է Պլուտարքոսը, Փյունիկիայում դրաղված էր ռազմական գործողություններով[13]։ Լուկուլլոսի՝ Հայաստան ներխուժելուց առաջ Տիգրանի՝ Պաղեստինում և Փյունիկիայում գտնվելու մասին են վկայում նաև Հովսեպոս Փլավիոսը և Մովսես Խորենացին[14]։ Տիգրանը Հայաստան է վերադարձել Լուկուլլոսի ներխուժումից հետո[15]։ Այսինքն՝ առնվազն Միհրդատյան III պատերազմի վերջին ժամանակաշրջանից մինչև Լուկուլլոսի՝ Հայաստան ներխուժելը Տիգրանը երկրում չէր։ Հետևաբար, նա չէր կարող Անտիոքում ընդունել որևէ դեսպանություն։ Միայն Պլուտարքոսը և Մեմնոն Հերակլեացին են խոսում այդ դեսպանության մասին[16]։ Դրա վերաբերյալ ոչինչ չեն հաղորդում Ապպիանոսը[17], Հովսեպոս Փլավիոսը, Մովսես Խորենացին, Դիոն Կասսիոսը և ուրիշներ։ Բնականաբար հարց է առաջանում՝ որքանո՞վ են արժանահավատ Պլուտարքոսը և Մեմնոնը։ Բացի այդ, ինչո՞ւ անտեսել բազմաթիվ պատմագիրների վկայությունները և հավատ ընծայել միայն երկու տեղեկության։ Պլուտարքոսի մոտ, Ապպիոսի դեսպանության պատմությունը նկարագրվող գլխում[18], տիրում է իրադարձությունների և փաստերի խառնաշփոթություն։ Այստեղ խոսվում է և՛ Տիգրանի գործունեության, և՛ նրա արքունիքի, և՛ Տիգրանակերտի բնակչության կազմի, և՛ Ապպիոսին ընդունելու մասին։ Շարադրանքն այնպիսին է, որ Տիգրանի՝ Ապպիոսին ընդունելու հատվածը[19], կարծես, բռնի է մտցվել և հարմարեցվել Տիգրանի գործունեությունն ու արքունիքը նկարագրող հատվածին[20]։ Ուսումնասիրողները թեև այլ դեպքերում կասկածով են վերաբերվում Պլուտարքոսի շատ տեղեկություններին[21], սակայն միշտ չէ, որ այդպես են վարվում Տիգրանի և նրա գործունեության կապակցությամբ։ Տվյալ դեպքում նրա հաղորդումները, կապված Տիգրան Բ Մեծի գործունեության հետ, մեծ մասամբ ընդունվում են անվերապահորեն։

---

10 ՀԺՊ, էջ 583—584։

11 Հ. Արմեն, նշվ. աշխ., էջ 139։

12 Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 488։

13 Plut., Luc., XXI, 2.

14 Jos. Flav., Bel. Jud., I, 116, Ant. Jud., XIII, 419—421; Մովսես Խորենացի, էջ 129։

15 Jos. Flav., Bel. Jud., I, 116, Ant. Jud., XIII, 421, ՊԲՀ, էջ 278, ՀԺՊ, էջ 585։

16 Plut., Luc., XIX, 1, XXI, 1, 6—7, Memnon, XLVI, 2—3:

17 Ապպիանոսը թեև նշված աշխատության մեջ խոսում է բազմաթիվ դեսպանությունների մասին (App, 3, 6, 6, 19—20, 11, 33, 12, 38, 65, 270 ևն), այնուամենայնիվ ոչինչ չգիտե Ապպիոսի դեսպանության մասին։ Նա հաղորդում է միայն, որ Լուկուլլոսը Տիգրանից պահանջեց Միհրդատին (նույն տեղում, LXXXIII, 375):

18 Plut., Luc., XXI, 1—7.

19 Plut., Luc., XXI, 6—7.

20 Plut., Luc., XXI, 3—5.

21 Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 510—513 ևն, ՀԺՊ, էջ 583, 584, ևն, Т. Моммзен, История Рима, т. 3, М., 1941, с. 49.

Մեմնոնը համարվում է չեզոք և վստահելի պատմագիր[22], սակայն դա պետք է ընդունել վերապահությամբ, որովհետև Հռոմի և Հերակլեա քաղաքի (որի պատմությունն է շարադրել Մեմնոնը) փոխհարաբերությունները հիմնականում եղել են բարեկամական[23]։ Բացի այդ, հայ-հռոմեական պատերազմի նրա նկարագրած որոշ մանրամասներ[24] չափազանց նման են Պլուտարքոսի, Ապպիանոսի և Դիոն Կասսիոսի հաղորդած տվյալներին[25]։ Հետևաբար, Մեմնոնը ևս օգտվել է նույն աղբյուրներից, այսինքն՝ նա դադարում է չեզոք լինելուց, ուստի և չպետք է վստահել նրա բոլոր վկայություններին։

Ուսումնասիրողները, հավատ ընծայելով Պլուտարքոսի և Մեմնոնի հաղորդած տեղեկություններին, չեն նկատել Հովսեպոս Փլավիոսի նշած շատ կարևոր վկայությունն այն մասին, որ Միհրդատը Լուկուլլոսին պարտվելուց հետո ապաստանել է ոչ թե Հայաստանում, այլ Հայաստանի վրայով փախել է Իբերիա (Միհրդատի վերջին պարտության վայրից՝ Կաբեյրայից, Իբերիա կարելի էր գնալ միայն Հայաստանի տարածքով)։ «Բայց հազիվ էր Պտղոմայիսը գրավվել,— գրում է Փլավիոսը,— երբ լուր հասավ Տիգրանին, թե Լուկուլլոսը, հետապնդելով Միհրդատին, չի կարողացել նրան բռնել, քանի որ (վերջինս) փախել է Իբերների երկիրը. և (Լուկուլլոսը), ասպատակելով Հայաստանը, պաշարել է (մայրաքաղաքը)»[26]։ Հովսեպոս Փլավիոսի այս վկայությունն անտեսելու հետևանքով հայ-հռոմեական պատերազմին նախորդող իրադարձությունները ուսումնասիրողները շարադրում են միակողմանի՝ Հռոմի նվաճողական քաղաքականության տեսանկյունից։ Այնինչ, այդ վկայության նկատմամբ պատշաճ ուշադրությունը կարող էր փոխել իրադարձությունների պատկերը։ Հովսեպոս Փլավիոսը, ի տարբերություն օտար մյուս պատմագիրների, անաչառ է ընդհանրապես, իսկ Հայաստանի վերաբերյալ իր հաղորդումներում՝ մասնավորապես[27]։ Տվյալ դեպքում նրա վկայությունը կասկած չի հարուցում և ապացուցվում է հետևյալ հանգամանքներով։

1. Միհրդատը, Լուկուլլոսին պարտվելուց հետո, կարող էր փախչել միայն Իբերիա, որովհետև Տիգրանը, ինչպես ընդունված է[28] և վերը տեսանք, Հայաստանում չէր։ Միհրդատն, անկասկած, գիտեր այդ մասին և չէր կարող օգնություն ակնկալել նրանից։ Այդ պատճառով նա գնացել էր Իբերիա՝ այնտեղից Բոսպոր մեկնելու և տեղի կառավարիչ Մաքարեսից՝ իր որդուց, օգնություն ստանալու նպատակով։ Այս ենթադրությունը կասկած չի հարուցում, որովհետև հետագայում, Պոմպեոսին պարտվելուց հետո, համարյա նույն պարագաներում, Միհրդատը վարվել է նույն կերպ[29]։ Սակայն այս անգամ

---

22 Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 186, 481։

23 Memnon, XXVI, 4, XXXIII, 2, LIX, 1—3.

24 Memnon, LVII, 1—2, LVIII, 1—2.

25 Plut., Luc., XXVII, 4, XXIX, 2, App., Mithr., LXXXV, 384, LXXXVII, 392, Cassii Dionis Cocceani Historiarum Romanorum quae supersunt, ed. Boissevain, Berolini, 1895, XXXVI, 2, XXXVI, 3, 1—3, 3.

26 Jos. Flav., Ant. Jud., XIII, 421.

27 Այդ մասին մանրամասը տե՛ս «Հովսեպոս Փլավիոս։ Դիոն Կասսիոս», էջ 13, 23, Ս. Կրկյաշարյան, Հին Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմության դրվագներ, Երևան, 1970, էջ 112։

28 ՊՐՀ, էջ 277—278։

29 App., Mithr., 101, 468.

(Լուկուլլոսին պարտվելուց հետո) Միհրդատի մտադրությունը չիրագործվեց, որովհետև Մաքարեսն արդեն դաշինք էր կնքել Լուկուլլոսի հետ[30]։ Միհրդատին մնում էր սպասել իրադարձությունների հետագա ընթացքին։

2. Լուկուլլոսի անմիջապես Հայաստան մտնելն առավել տրամաբանական է, քան այն, որ նա իբր դադարեցրել է Միհրդատին հետապնդելը և զբաղվել Պոնտոսի տարածքն ու քաղաքները գրավելով[31], և իբր Տիգրանից Միհրդատին պահանջելուց հետո մեկնել է Ասիա պրովինցիա[32]։ Տրամաբանական է, որովհետև Միհրդատի դեմ պատերազմն ավարտված կարելի էր համարել միայն Հռոմի երդվյալ թշնամուն գերելով կամ նրա մահով[33]։ Հայտնի է, որ հռոմեացիներն ամեն կերպ ձգտում էին իրենց ձեռքը գցել մեկ ուրիշ ոխերիմ թշնամու՝ Հաննիբալին[34], իսկ Պոմպեոսը՝ Միհրդատին[35]։

Հովսեպոս Փլավիոսի նշված տեղեկությունից հայտնի է դառնում նաև, որ Լուկուլլոսը Հայաստան է ներխուժել Միհրդատին հետապնդելով[36], այսինքն՝ մ. թ. ա. 71 թ. աշնանը և ոչ թե մեկուկես տարի հետո, ինչպես ընդունված է[37]։ Հովսեպոս Փլավիոսի այդ վկայությունը հաստատվում է Մովսես Խորենացու Բ գրքի ԺԴ գլխում շարադրված իրադարձություններով, որոնցից երևում է, որ Լուկուլլոսը Հայաստան է ներխուժել Տիգրանի գահակալման սկզբին՝ հավանական է մ. թ. ա. 71 թ., քանի որ, ըստ Խորենացու, Տիգրան Բ (Խորենացու մոտ՝ Տիգրան Միջինը) գահ է բարձրացել մ. թ. ա. 74 թ.[38]։ Մտնելով Հայաստան, Լուկուլլոսը, Տիգրանի բացակայության պայմաններում, ուժը բաց չթողեց նվաճելու ևս մի թագավորություն[39]։ Կարելի է առարկել, թե Լուկուլլոսը չէր կարող թիկունքում թողնել լիովին չնվաճված Պոնտոսը։ Սակայն չմոռանանք, որ Պոնտոսի ռազմական հիմնական ուժերը ջախջախված էին, և բացի այդ, Լուկուլլոսը Պոնտոսում թողել էր Սորնատիոսին[40]։

Հովսեպոս Փլավիոսի վկայությունը մեկ անգամ ևս հավաստում է, որ, ինչպես վերը տեսանք, Ապպիոս Կլոդիոսի դեսպանությունը չի կայացել, որովհետև նախ՝ Միհրդատը Հայաստան չէր փախել և հարկ չկար նրան Տիգրանից պահանջել, երկրորդ՝ այդպիսի դեսպանության համար ժամանակ անգամ չկար։ Այդ վկայությունից երևում է նաև, որ Միհրդատի և Լուկուլլոսի միջև մարտական գործողությունների ժամանակ Տիգրանն, իր հերթին, պատերազմում էր Փյունիկիայում և Պաղեստինում, այսինքն՝ վարում էր արտաքին բարենպաստ իրադրությանն համապատասխան քաղաքականություն։

---

30 App., Mithr., 83, 375, Memnon, LIV, 1, Plut., Luc., XXIV, I.

31 Plut., Luc., XIX, 1—2, App., Mithr., 82, 369.

32 App., Mithr., 83, 375—376.

33 *Հմմտ.՝* Cicero, Pro Murena, (LCL), CML, 1959, XVI, 34 (*էջ 190*).

34 Ն. *Մաշկին, Հին Հռոմի պատմություն, Երևան, 1951, էջ 269,* «История древнего Рима», М., 1971, с. 112.

35 Plut., Pomp., XXXIV, 1.

36 Jos. Flav., Ant. Jud., XIII, 421.

37 Հ. *Մանանդյան, նշվ. աշխ., էջ 186, 481, ՀԺՊ, էջ 585, ՊԲՀ, էջ 277։*

38 Լ. *Շահինյան, Ո՞րն է Խորենացու «Հայոց պատմության» ժամանակագրական համակարգը («Բանբեր Մատենադարանի», 1967, № 8, էջ 43 և էջ 48-ի ու 49-ի միջև գտնվող աղյուսակը)։*

39 *Հմմտ.՝ ՀԺՊ, էջ 585։*

40 Plut., Luc., XXIV, 1.

Մի կարևոր հանգամանք. մ. թ. ա. 59 թ. գարնանը նախատեսվել է դեսպանություն ուղարկել Տիգրանի մոտ՝ Ապպիոս Կլոդիոսի եղբոր՝ Պուբլիոսի գլխավորությամբ[41]։

Այժմ տեսնենք, թե ինչպես է շրջանառության մեջ դրվել Ապպիոս Կլոդիոսի դեսպանության պատմությունը մ. թ. ա. 71 թ. վերջի կամ 70 թ. համար։ Լուկուլլոսի հարձակումն անսպասելի էր և ավազակային։ Այդ մասին վկայում են ոչ միայն Հովսեպոս Փլավիոսը և Մովսես Խորենացին[42], այլև՝ Պլուտարքոսն ու Մեմնոնը[43]։ Լուկուլլոսը չուներ Հայաստանի հետ պատերազմելու ծերակույտի կամ ժողովրդական ժողովի թույլտվությունը[44]։ Սալլուստիոսի մի վկայությունից երևում է, որ առանց թույլտվության պատերազմ կամ ճակատամարտ սկսելը ծանր հանցանք էր[45]։ Այդ հանգամանքներում, որոնք ինքն էր ստեղծել, Լուկուլլոսը պետք է զեկուցագրերում հորիներ ծանրակշիռ փաստեր իր հանցավոր գործողություններն արդարացնելու համար։ Լուկուլլոսը (կամ Պլուտարքոսը, միևնույնն է) հորինել է մի պատմություն, թե իբր Տիգրանը և Միհրդատը մտադրվել են մտնել Կիլիկիա և Լիկաոնիա՝ հռոմայեցիների վրա հարձակվելու համար[46]։ Այս պատմության շինծու լինելն ակնհայտ է։ Ինչպես կարող էին նախահարձակ լինել Տիգրանը, որ Պաղեստինում և Փյունիկիայում էր, և Միհրդատը, որը ջախջախված և Իբերիայում էր։ Պլուտարքոսն իր հերոսին արդարացնելու համար Լուկուլլոսի կամ իր հորինածին ավելացնում է մ. թ. ա. 59 թ. նախատեսված դեսպանությունը՝[47] այն տանելով 11—12 տարի առաջ։

Այսպիսով, Լուկուլլոսի՝ Հայաստան ներխուժելու նախօրեին կատարված իրադարձությունների վերաբերյալ ունենք երկու հիմնական վկայություն. մի կողմից՝ Պլուտարքոսի և Մեմնոնի, մյուս կողմից՝ Հովսեպոս Փլավիոսի և Մովսես Խորենացու։ Պլուտարքոսի նպատակն է ամեն կերպ հիմնավորել, որ Լուկուլլոսը իրավունք ուներ հարձակվելու Հայաստանի վրա, քանի որ Տիգրանն իբր որոշել էր նախահարձակ լինել և, բացի այդ, իբր նա Ապպիոս Կլոդիոսին մերժել է հանձնել Միհրդատին։ Հովսեպոս Փլավիոսը և Մովսես Խորենացին չունենալով նման նպատակներ՝ հօգուտ Տիգրանի (Հովսեպոսը նույնիսկ հիմք ուներ ատելու Տիգրանին)[48], իրադարձությունները շարադրում են պարզ և հստակ, առանց խառնաշփոթության։ Վերջիններիս մոտ իրադարձությունները զարգանում են տրամաբանական հաջորդականությամբ, առանց ընդհատումների։ Արդ, պետք է մերժել Պլուտարքոսի և այլոց տեղեկությունների արժանահավատությունը հայ-հռոմեական պատերազմի նախօրեի իրադարձությունների վերաբերյալ ու դրանք շարադրել Հովսեպոս Փլավիոսի

---

41 Cicero, Letters..., vol. 1 (LCL), CML, 1956, II, 4 (p. 118), II, 7 (p. 128) (այսուհետև՝ Cicero ad Atticum).

42 Jos. Flav., Bel. Jud., I, 116, Ant. Jud., XIII, 421; Մովսես Խորենացի, էջ 129,

43 Plut., Luc., XXIV, 1—2, Memnon, LVI, 1.

44 Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 192, 488, Հ. Աստուրյան, նշվ. աշխ., էջ 48, Հ. Արմեն, նշվ. աշխ., էջ 130, Т. Моммзен, նշվ. աշխ., էջ 56։

45 Sallust, (LCL), CML, 1960, LII, 30—31 (p. 106).

46 Plut., Luc., XXIII, 7.

47 Cicero, ad Atticum, II, 4, II, 7.

48 Հմմտ.՝ «Հովսեպոս Փլավիոս։ Դիոն Կասսիոս», էջ 23։

և Մովսես Խորենացու անաշառ ու տրամաբանական վկայությունների հիման վրա։

Ամփոփենք. հայ-հռոմեական պատերազմի նախօրեի իրադարձություններն ունեն հետևյալ տեսքը. Միհրդատյան III պատերազմին զուգընթաց տեղի էր ունենում Տիգրան Բ Մեծի արշավանքը Փյունիկիայում և Պաղեստինում։ Միհրդատ VI պարտվելով Լուկուլլոսից և գիտենալով, որ չի կարող օգնություն ստանալ Հայաստանից բացակայող Տիգրանից, փախել է Իբերիա՝ այնտեղից Բոսպոր անցնելու նպատակով։ Լուկուլլոսը, կրնկակոխ հետապնդելով Միհրդատին, հանկարծակի ներխուժել է Հայաստան և, հայոց արքայի ու նրա ռազմական հիմնական ուժերի բացակայության պայմաններում, որոշել է նվաճել այն։ Տիգրան Բ Մեծը լսելով այդ մասին, շուտափույթ վերադարձել է Հայաստան։ Ինքնին հասկանալի է, որ նման պարագայում վերանում են նաև Տիգրան Բ Մեծի անհեռատես, խարված և միամիտ անձնավորություն լինելու մասին եղած ենթադրությունները։ Այդ է վկայում Տիգրան Բ Մեծի ամբողջ գործունեությունը։

К ВОПРОСУ О ПОСОЛЬСТВЕ АППИЯ КЛОДИЯ

СЕДРАК КРКЯШАРЯН

Резюме

В историографии принята точка зрения, согласно которой после поражения от Лукулла Митридат VI нашел убежище в Армении, и римский полководец Лукулл в качестве посла к Тиграну II Великому отправил Аппия Клодия с требованием выдать Митридата. Тигран отклонил требование Лукулла, и последний через полтора года вторгся в Армению. В действиях Лукулла историки усматривают цель усыпить бдительность Тиграна и считают, что Тигран был весьма спокоен перед надвигавшейся угрозой.

Анализ сведений Плутарха, Мемнона Гераклийского, Иосифа Флавия и Мовсеса Хоренаци, касающихся вышеупомянутых событий, приводит к выводу, что подобная трактовка событий исходит в основном от сведений Плутарха, который с целью оправдать незаконные действия Лукулла сочинил историю о посольстве Аппия Клодия. Из данных Иосифа Флавия и Мовсеса Хоренаци видно, что во время третьей Митридатовой войны Тигран в свою очередь был занят военными действиями в Финикии и Палестине, и что Митридат через Армению бежал в Иверию и, следовательно, незачем было требовать его у Тиграна. Кроме того, Лукулл вторгся в Армению, преследуя Митридата, так что у него не было времени для посольства.